ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 25 մարտի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի
Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի
Վ. Պողոսյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Ռաֆֆի Կ. Ռիչարդի Հովհաննիսյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Քաղաքացի Ռաֆֆի Կ. Ռիչարդի Հովհաննիսյանը 07.03.2013թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 5-րդ մասով եւ 26-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթների սահմանադրականությունը:

Դիմողը գտնում է, որ թեկնածուի անուն-ազգանունով եւ կարգախոսով պաստառը, թեկուզեւ ընտրական շտաբ նշումով, իրականում քարոզչական պաստառ է, իսկ դրանց համար վարձակալած տարածքներն էլ քարոզչական տարածքներ են, ուստի դրանց համար ծախսերը պետք է կատարվեն ընտրական հիմնադրամների միջոցների հաշվին, որը բխում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 2-րդ եւ 4-րդ հոդվածներից, եւ այդ սկզբունքը խախտվում է ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 5-րդ մասով:

Դիմողի կարծիքով՝ քանի որ գործել են 1600 քարոզչական տարածքներ, իսկ քարոզչական պաստառները գերազանցել են 1600-ը, ՀՀ Նախագահի թեկնածու Սերժ

Սարգսյանը հնարավորություն է ստացել նախընտրական քարոզարշավի համար թույլատրված առավելագույն 100.000.000 դրամ գումարը կրկնակի եւ եռակի գերազանցող գումար ծախսել, ինչը, ըստ դիմողի՝ թեկնածուի գրանցումն անվավեր ճանաչելու հիմք է: Մինչդեռ ԿԸՀ-ն որոշում է կայացրել, որի համաձայն նախընտրական շտաբի վարձակալությունը հանվել է թեկնածուների ֆինանսական հայտարարագրում ընդգրկված ցուցակից, եւ իր կայքում 24.02.2013թ. թվագրմամբ հայտարարություն է տարածել այն մասին, որ վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունն ընտրական օրենսգրքով սահմանված քարոզչական ֆինանսավորման որեւէ խախտում չի արձանագրել:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ դիմողը նշում է, որ նման դրույթի առկայությունը բացառում է նոր հանգամանքի հիմքով նման դատական ակտի վերանայումը, ինչը հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին եւ 18-րդ հոդվածներին, քանի որ, եթե այդ դատական ակտով կիրառված օրենքը Սահմանադրությանը հակասող է ճանաչվել, սակայն դա չի հանդիսանում այդ դատական ակտի վերանայման հիմք, ապա հակասահմանադրական օրենք պարունակող նման դատական ակտի ուժի մեջ մնալը հակասում է իրավական պետության բնույթին, նաեւ անձը զրկվում է իր իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքն իրականացնելու հնարավորությունից:

Դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ նշյալ դրույթի հակասահմանադրականության վերաբերյալ փաստարկներ ներկայացնելիս դիմողն իրականում բարձրացնում է վերացական վերահսկողության հարց: Կոնկրետ վերահսկողության պարագայում անհրաժեշտ պայման է, որ վիճարկվող դրույթը կիրառված լինի անձի նկատմամբ, եւ կիրառման արդյունքում համապատասխան պատճառահետեւանքային կապի առկայության համատեքստում խախտված լինի անհատի սահմանադրական կոնկրետ իրավունքը: Խնդրո առարկա գործի պարագայում կոնկրետ վերահսկողության բնորոշ բոլոր չափանիշները բացակայում են:

Ինչ վերաբերում է ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի եւ 26-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներին, ապա ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը փաստում է, որ առկա չեն դիմումի քննությունը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով, 69-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Քաղաքացի Ռաֆֆի Կ. Ռիչարդի Հովհաննիսյանի անհատական դիմումով գործը քննության ընդունել մասնակի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ հոդվածի 1-ին մասով մերժել, իսկ ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 5-րդ մասով եւ 26-րդ հոդվածի 2-րդ մասով ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

25 մարտի 2013 թվականի
ՍԴԴԿՈ/2-12